

ՀՏԴ 581.4

Բուսաբանություն

Մայա ԾԱՏՐՅԱՆ

ԱրՊՀ, գ.գ.թ., կենսաբանության ամբիոնի դոցենտ

E – mail: c@mail.ru

**ԱՀ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԽՆԱԾԱԽԻ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԴԵՆԴՐՈՖԼՈՐԱՅԻ  
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնասիրվել է Ասկերանի շրջանի Խնածախի տարածաշրջանի դենդրոֆլորայի տեսակային կազմը:

Արդյունքում գրանցվել են 23 ընտանիքների և 43 ցեղերի պատկանող 64 տեսակ ծառեր, թփեր և լիաններ: Տեսակների բազմազանությամբ և գեղազարդությամբ աչքի են ընկնում տեղանքի հյուսիսարևմտյան և արևմտյան խիտ անտառապատ տարածքները, որտեղ կենտրոնացած են նաև պտղատու ծառերն ու թփերը: Պարզաբանվել է ուսումնասիրվող տարածքում հայտնաբերված բույսերի կարգաբանական ցուցակը, ինչպես նաև դրանց կենսակերպիական և ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները:

*Բանալի բառեր՝* Խնածախ, դենդրոֆլորա, ծառ, թուփ, լիան, բազմազանություն, ընտանիք, ցեղ, վարդագգիներ, ձիթենազգիներ, ցախակեռասազգիներ:

**М.Цатурян**

**АНАЛИЗ ИССЛЕДОВАНИЙ ДЕНДРОФЛОРЫ  
ХНАЦАХСКОГО РАЙОНА АСКЕРАНСКОЙ ОБЛАСТИ  
РЕСПУБЛИКИ АРЦАХ**

Изучен видовой состав дендрофлоры Хнацахского района Аскеранской области. В результате зарегистрированы 64 вида деревьев, кустарников и лиан, принадлежащих к 43 родам и 23 семействам. По разнообразию и декорации видов примечательны северо-западный и западный густые лесные массивы, где сосредоточены также плодовые деревья и кустарники. Выявлены таксономический перечень обнаруженных в исследованной области растений, а также их биоэкологические и фитоцено- тические особенности.

**Ключевые слова:** Хнацах, дендрофлора, дерево, куст, лиана, разнообразие, семейство, род, розовые, маслиновые, жимолостные.

*M. Tsatryan*

**THE ANALYSIS OF THE STUDIES OF KHNATSAKH REGION  
DENDROFLORA OF THE ASKERAN REGION IN THE  
REPUBLIC OF ARTSAKH**

*The species composition of the Khnatsakh region dendroflora of the Askeran region has been studied. As a result, 64 species of trees, bushes and lianes have been registered, which belong to 43 genera and are included in 23 families. The dense forested areas in the north-western and western are remarkable with their variety and ornamentation, where fruit trees and bushes are also concentrated. The taxonomic list of the plants discovered in the studied area is also clarified, as well as the bioecologic and phytocenotic peculiarities.*

**Key words:** *Khnatsakh, dendroflora, tree, bush, liane, variety, family, genus, Rosaceae, Oleaceae, Caprifoliaceae*

Կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանությունը և ռացիոնալ օգտագործման ապահովումը դարձել են համաշխարհային առաջնահերթ հիմնախնդիրներ: Ներկայումս խիստ անհրաժեշտ է ֆլորայի խորն ու բազմակողմանի ուսումնասիրությունը բնական բուսական համակեցությունների պահպանման, բարելավման և առավել արդյունավետ օգտագործման միջոցառումների մշակման համար: Չնայած ամբողջ Կովկասի ֆլորայի և բուսականության ուսումնասիրության երկարատև պատմությանը, մինչ այժմ Ասկերանի ֆլորիստական շրջանի Խնածախի տարածքի բուսականության նպատակային ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Խնածախ գյուղը գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում, Ստեփանակերտ քաղաքից 5 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք: Գյուղը հիմնված է մի բարակ ձորակի երկու կողմներում: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 840 մ է, կլիման չոր մերձարևադարձային է [3]: Գյուղը հարուստ է աղբյուրներով. «Երեք քույրիկներ»՝ արևմտյան մասում, Աթունց աղբյուրը՝ հարավային մասում, «Արալի աղբյուր»՝ Դիլլաքին ձորում, որից վեր՝ «Դերին աղբյուր»:

Շետազոտության նյութ են հանդիսացել Խնածախի շրջակայքից մեր հավաքած դենդրոֆլորայի նմուշները: Նյութը մշակելուց և հերբարիում պատրաստելուց հետո բույսերն խմբավորվել են ըստ տեսակի, կազմվել բույսերի կարգաբանական ցուցակը և կատարվել տաքսոնոմիական վերլուծություն: Խնածախի շրջակայքի բուսատեսակները որոշելիս հիմք են ընդունվել մենագրություններ, որոշիչներ, գրքեր և այլն [1,2,4,5]:

Արևելյան մասում մինչև Տրազետ ընկած հատվածը կոչվում է «Դիննակի գլուխ», իսկ գետից վեր խիտ անտառներ են: Դեպի Տրազետ տանող ճանապարհը, որը ձևավորում է ենթաանտառը՝ հիմնականում ընդգրկում է կովկասյան բոխին /*Carpinus caucasica*/, դաշտային թխկին /*Acer campestre*/, սովորական տխլենին /*Corylus avellana*/, կովկասյան սգնին /*Crataegus caucasica*/, սակավաթիվ սովորական կիպրոսը /*Ligustrum vulgare*/, դժնիկ պալասին /*Rhamnus pallasii*/: Մոշենի անատոլիականը ձևավորում է ընդարձակ բուսուտներ: Տրազետ գետի ողջ երկայնքով տարածված են ուռենու ծառուտներ: Տրազետ գետի երկայնքով կիրճերի լայն մասերում տարածված է գետահովտային անտառ, որտեղ գերիշխող տեսակներ են՝ կովկասյան բոխին /*Carpinus caucasica*/, վրացական և խոշորառեջ

կաղնիները /*Quercus iberica*, *Q. macranthera*/: Որպես ուղեկցող ծառատեսակներ՝ հանդիպում են դաշտային թխկին /*Acer campestre*՝ անտառի ստորինից մինչև վերին սահմաններում, արևելյան բոխին /*Carpinus orientalis*՝ որպես ստորադաս ծառատեսակ, հարավային ճապկին /*Cornus australis*/, իսկ թփատեսակներից՝ սովորական տխլենին /*Corylus avellana*/, եվրոպական և լայնատերև իլենիները /*Euonymus europea*, *E. latifolia*/, որոնք անտառի ստորին սահմանում առաջացնում են ծառուտներ: Ընդարձակ բուսուտներով է հանդես գալիս գերիմաստին /*Viburnum lantana*՝ անտառի ստորինից մինչև վերին սահմաններում: Լիաններից վայրի խաղողը /*Vitis sylvestris*՝ հանդիպում է անտառի ողջ տարածքում: Հազվադեպ հանդիպում է սովորական կիպրոսը /*Ligustrum vulgare*/: Անտառի վերջնամասում ցաքու /*Paliurus spina christi*/ թփուտներ են:

Գյուղն արևմուտքից շրջապատող լանջերը թփուտածածկ են, դեպի հյուսիս արևմուտք վեր են ածվում խիտ անտառների՝ հարուստ տեսակային կազմով, որտեղ գտնվում է «Պյանոր» սրբատեղին, որը տեսակային կազմով շատ է տարբերվում շրջակայքի անտառների տեսակային կազմից: Այստեղ լայնորեն տարածված են հացենու, տխլենու, կաղնու, բոխու, թխկու ծառուտները, ինչպես նաև սզնին /*Crataegus caucasica*, *Crataegus armena*/: Արևելյան սզնին հանդիպում է անտառի բաց, լուսավոր մասերում /*Crataegus orientalis*/: Վայրի պտղատուներից լայն տարածում ունեն նաև խնձորենին /*Malus orientalis*/, տանձենին /*Pyrus caucasica*/, զկեռենին /*Mespilus germanica*/: Լիաններից արևմտյան անտառներում հանդիպում է սովորական բաղեղը /*Crataegus orientalis*/: Լայնատերև իլենին /*Euonymus latifolia*/ հանդիպում է անտառի վերին սահմաններում: Կիսաթփերից հանդիպում է մոշենի երկարապտուղը /*Rubus dolichocarpus*/: Անտառի վերին սահմաններում հոնին առաջացնում է մաքուր ծառուտներ, իսկ անտառի լուսավոր մասերում մամխենու մաքուր թփուտներ են:

Հյուսիս արևմտյան մասի լանջի ներքին սահմանը անվանում են «Կիրատեղ», որից վեր ընկած հատվածը՝ «Շրմանանց տափ», վերին սահմանը՝ «Դալուն տախտ»:

Գյուղամիջի ամբողջ տարածքը ակացիայի /*Robinia pseudoacacia*/ ծառուտներ են, իսկ ցանկապատերին՝ լոշտակի /*Bryonia dioica*/ և կնքաբույսի /*Tamus communis*/ լիաններ: Գյուղամիջում գերիշխում են կիսաթփերից մոշուտները՝ ցեղ մոշու տարատեսակներով, իսկ թփերից՝ ամենուր կտակենու /*Sambucus nigra*/ բուսուտներ են:

Դպրոցամերձ տարածքի դենդրոֆլորան ընդգրկում են դաշտային թխկին, սովորական կիպրոսը և ընդարձակ բուսուտներ են առաջացնում անատոլիական մոշենու (*Rubus anatolicus*) կիսաթփերը, որոնք հուլիսին աչքի են զառնում իրենց մանուշակագույն ծաղիկներով: Հյուսիսարևմտյան մասի ենթաանտառում հիմնականում դոմինանստում են մոշուտները, հանդիպում են նաև արևելյան խնձորենին /*Malus orientalis*/, զկեռենին /*Mespilus germanica*/, ցաքին /*Paliurus spina-Christi*/: Անտառը կազմող տեսակներն են՝ տերևառատ թեղին /*Ulmus foliacea*/, կովկասյան բոխին /*C. caucasica*/, հոնին /*Cornus mas*/, հարավային և վրացական ճապկին /*Swida australis*, *S. iberica*/, վրացական կաղնին /*Quercus iberica*/, բոխատերև ձեղկվան /*Zelkova carpinifolia* /, առավել շատ են հանդիպում տխլենու /*C. avellana* L./ և զկեռենու ծառուտները: Անտառի վերին բաց լուսավոր մասերում հանդիպում են դժնիկ պալասին /*Rhamnus pallasii* /, գերիմաստին /*Viburnum lantana* / և զկեռենին:

Հարավային մասի /գյուղացիները այս մասը անվանում են <<Վշկա>>/ արևելահայաց լանջը չոր, քարքարոտ լեռնալանջեր են, որի ստորին բաց լուսավոր տարածքներում հանդիպում է սովորական թզենին /*Ficus carica*/, կովկասյան փռչնին /*Celtis caucasica*/, ակացիան /*Robinia pseudoacacia*/ և արևելյան սոսին /*Platanus orientalis*/: Դեպի վեր ցաքին առաջացնում է մացառուտներ, իսկ լանջի վերջնամասում ցաքու հետ միասին մացառուտներ են առաջացնում դժնիկ պալասին, թփային հասմիկը /*Jasminum fruticans*/ և վրացական ցախակեռասը /*Lonicera iberica*/, իսկ հետին լանջի սկզբնամասում ասպիրակի /*Spiraea hypericifolia*/ թփեր են: Սակավաթիվ հանդիպում է նաև սգնի հայկականը /*C. armena*/: Լանջի հետին մասը անտառապատ է, անտառի գերակշռող ծառատեսակ է կովկասյան բոխին, որն առաջացնում է մաքուր ծառուտներ, և կաղնին: Կաղնին մաքուր ծառուտներ չի առաջացնում: Որպես երկրորդական տեսակ՝ հանդիպում է տերևառատ թեղին: Ենթաանտառում հանդիպում են կիպրոս, չմենի /*Cotoneaster integerrimus*/ և սգնի:

<<Յերե>> աղբյուրի մոտ աճում է սև ընկուզենին /*Juglans nigra*/, իսկ սովորական ընկուզենին /*Juglans regia*/ լայն տարածում ունի գետահովիտներում: Դպրոցամերձ տարածքում աճում է կովկասյան սրնգենին /*Philadelphus caucasicus*/: Խենոմելես ճապոնականը /*Chaenomeles japonica*/ արդեն 25 տարուց ավել է, ինչ հաջողությամբ կլիմայավարժվել է Խնածախի պայմաններին:

Հետազոտվող դենդրոֆլորան ներառում է 69 տեսակ, որոնք պատկանում են 26 ընտանիքների և 43 ցեղերի: Ասկերանի ֆլորիստական շրջանի Խնածախի տարածաշրջանի դենդրոֆլորայի ընտանիքների սպեկտրում առաջին տեղը գրավում է Rosaceae ընտանիքը /11ցեղ, 22տեսակ/ /աղ.1/:

Աղյուսակ 1.

**Խնածախի տարածաշրջանից հայտնաբերված բույսերի կարգաբանական ցուցակ**

Տեսակի անվանումը	Կենսական ձևը	Կենսակոլոգիական և ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները
<b>Արալիազգիներ-</b>		
1	Բաղեղ սովորական <i>Crataegus orientalis</i> Pall	Լ <sub>մ</sub> Անտառում
<b>Բակլազգիներ – Fabaceae</b>		
2	Ակացիա սպիտակ <i>Robinia pseudoacacia</i> L.	Ծ <sub>տ</sub> Գյուղամիջում
3	Պայթակենի կիլիկյան - <i>Colutea cilicica</i> Boiss. et Bal.	Թ <sub>տ</sub> Թփուտներում
<b>Դդմազգիներ Cucurbitaceae</b>		
4	Լոշտակ երկտուն – <i>Bryonia dioica</i> Jacq.	Լ <sub>տ</sub> Գյուղամիջում
<b>Դժնիկազգիներ-Rhamnaceae</b>		
5	Դժնիկ լուծողական - <i>Rhamnus cathartica</i> L.	Ծ <sub>տ</sub> Թփուտներում
6	Դժնիկ Պալլասի - <i>Rhamnus</i>	Թ <sub>տ</sub> Չոր քարքարոտ

	pallasii Fisch. et Mey. C. A. Mey.		լեռնալանջերին, շիբլյակներում
7	Ցաքի փշոտ - Paliurus spina-christi Mill.	Թ <sub>տ</sub>	Չոր քարքարոտ լեռնալանջերին
<b>Դիսկորեազգիներ – Dioscoreaceae</b>			
8	Կնքարոյս – Tamus communis L.	Լ <sub>տ</sub>	Կաղնեքոխային անտառներում
<b>Դրախտավարդազգիներ - Hydrangeaceae</b>			
9	Սրնգենի կովկասյան - Philadelphus caucasicus Kochne	Թ <sub>տ</sub>	Թփուտներում
<b>Ընկուզազգիներ – Juglandaceae</b>			
10	Ընկուզենի սովորական - Juglans regia L.	Ծ <sub>տ</sub>	Գետահովիտներում
11	Ընկուզենի սև Juglans nigra L.	Ծ <sub>տ</sub>	Գետահովիտներում
<b>Ընտանիք Թթազգիներ – Moraceae</b>			
12	Թզենի սովորական- carica L.	Ծ <sub>տ</sub>	Քարքարոտ լանջերին
<b>Թխկազգիներ - Aceraceae</b>			
13	Թխկի դաշտային - Acer campestre L.	Ծ <sub>տ</sub>	Անտառներում, անտառեզրերին
14	Թխկի վրացական - Acer ibericum M. Bieb	Ծ <sub>տ</sub>	Անտառներում, անտառեզրերին
<b>Թեղազգիներ -Ulmaceae</b>			
15	Թեղի բոխաստերև - Ulmus carpinifolia Rupp. ex Suckow	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
16	Թեղի տերևառատ - Ulmus foliacea Gilib	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
17	Ձեկվա բոխաստերև - Zelkova carpinifolia /Pall./ K. Koch	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
<b>Թունաթափազգիներ – Asclepiadaceae</b>			
18	Շրջահյուս հունական /Periploca graeca L./	Լ <sub>տ</sub>	Հյուսիս արևելյան անտառներում
<b>Իլենազգիներ-Celastraceae</b>			
19	Իլենի եվրոպական - Euonymus europea L.	Թ <sub>տ</sub>	Անտառներում
20	Իլենի լայնատերև - Euonymus latifolia /Z./ Mill.	Թ <sub>տ</sub>	Անտառներում

<b>Խաղողագիներ – Vitaceae</b>			
21	Խաղող անտառային - Vitis sylvestris C.C. Gmel	L <sub>տ</sub>	Գետահովտային անտառներում
<b>Ծորենագիներ – Berberidaceae</b>			
22	Ծորենի սովորական – Berberis vulgaris L.	Թ <sub>տ</sub>	Անտառներում
<b>Հաճարագիներ – Fagaceae</b>			
23	Կաղնի վրացական - Quercus iberica Steven	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
24	Կաղնի խոշորատեղ - Quercus macranthera Fisch. et C. A. Mey. et Hohen	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
<b>Հոնագիներ – Cornaceae</b>			
25	Հոնի սովորական – Cornus mas L	Ծ/թ/տ	Անտառներում, խոնավ աճելավայրերում, հիմնականում ձևավորում է մաքուր ծառուտներ
26	Ճապկի հարավային - Swida australis Pojark	Ծ/թ/տ	Անտառներում, անտառեզրերին
27	Ճապկի վրացական - Swida iberica Pojark. ex Grossh	Ծ/թ/տ	Անտառներում, անտառեզրերին
<b>Ձիթենագիներ – Oleaceae</b>			
28	Հացենի սովորական - Fraxinus excelsior L.	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
29	Հացենի սրապտուղ - Fraxinus oxycarpa Willd.	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
30	Հասմիկ թփային - Jasminum fruticans L.	Թ <sub>տ</sub>	Թփուտներում
31	Կիպրոս սովորական - Ligustrum vulgare L.	Թ <sub>տ</sub>	Անտառներում
<b>Նոճագիներ – Cupressaceae</b>			
32	Գիհի ցածրաճ – Juniperus hemisphaerica J.	Թ <sub>տ</sub>	Անտառի վերին սահմաններում
33	Գիհի երկարատերև - Juniperus oblonga M. Bieb.	Ծ/թ/մ	Կաղներոխային անտառներում
<b>Նոնագիներ-Punicaceae</b>			
34	Նոնենի սովորական - Punica granatum L	Ծ <sub>տ</sub>	Չոր լեռնալանջերին, արիդային նոսրանտառներում, հատուկենտ
<b>Սոսագիներ-Platanaceae</b>			
35	Սոսի արևելյան - Platanus	Ծ <sub>տ</sub>	Գետահովիտներում

	orientalis L		
<b>Վարդագզիներ – Rosaceae</b>			
36	Ասպիրակ սրոհունդատերև - Spiraea hypericifolia L.	Թ <sub>տ</sub>	Չոր, քարքարոտ լանջերին
37	Ջլեռենի սովորական - Mespilus germanica L.	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
38	Ինձորենի արևելյան - Malus orientalis Uglitzk	Ծ <sub>տ</sub>	Առափնյա անտառներում
39	Կեռասենի անտառային - Cerasus avium Moench	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
40	Խենամելես ճապոնական Chaenomeles japonica (THUNB) LINDL. EX SPACH	Թ <sub>տ</sub>	Լանջերին
41	Մասրենի սովորական - Rosa canina L.	Թ <sub>տ</sub>	Անտառեզրերին, թփուտներում
42	Մասրենի առատափուշ - Rosa spinosissima L.	Թ <sub>տ</sub>	Քարքարոտ լանջերին, թփուտներում
43	Մոշենի սովորական – Rubus caesius L	Կ <sub>թ</sub>	Թփուտներում
44	Մոշենի կովկասյան - Rubus caucasicus /Focke/ Focke ex Haussen	Կ <sub>թ</sub>	Թփուտներում
45	Մոշենի անատոլիական Rubus anatolicus Focke	Կ <sub>թ</sub>	Անտառեզրերին, թփուտներում
46	Մոշենի թաղիքավոր – Rubus tomentosus Borkh	Կ <sub>թ</sub>	Թփուտներում
47	Մոշենի երկարապտուղ - Rubus dolichocarpus Juz.	Կ <sub>թ</sub>	Անտառներում
48	Մոշենի հայկական – Rubus armeniacus Focke	Կ <sub>թ</sub>	Թփուտներում
49	Մոռենի Բուշի ( Rubus Buschii /Rozan./ A. Grossh	Կ <sub>թ</sub>	Անտառներում
50	Չմենի ամբողջաեզր - Cotoneaster integerrimus Medik	Թ <sub>տ</sub>	Չոր լանջերին, անտառներում
51	Սալորենի փշոտ, մամիսենի – Prunus spinosa L. /կլրտն/	Թ <sub>տ</sub>	Անտառներում, խոնավ աճելավայրերում
52	Սալորենի սովորական - Prunus divaricata Ledeb.	Թ <sub>տ</sub>	Անտառներում, գետի ափերին
53	Սզնի կովկասյան - Crataegus caucasica	Ծ <sub>տ</sub>	Նոսրանտառներում, բոխուտներում

	K. Koch		
54	Սզնի արևելյան - Crataegus orientalis Pall	Ծ <sub>տ</sub>	Թփուտներում
55	Սզնի հայկական - Crataegus armena Pojark.	Ծ <sub>տ</sub>	Նոսրանտառներում, կաղնուտներում
56	Տանձենի կովկասյան - Pyrus caucasica Fed.	Ծ <sub>տ</sub>	Առափնյա անտառներում
57	Տանձենի ուռատերև - Pyrus salicifolia Pall.	Ծ <sub>տ</sub>	
<b>Տյալազգիներ – Corylaceae</b>			
58	Տյալենի սովորական - Corylus avellana L.	Թ <sub>տ</sub>	Անտառներում, բոխուտներում /արևելյան մաս, հյուսիս արևմտյան մաս/
59	Բոխի արևելյան, ջղանե - Carpinus orientalis Mill	Ծ/թ/տ	Անտառներում
60	Բոխի կովկասյան – Carpinus caucasica L	Ծ <sub>տ</sub>	Անտառներում
<b>Ցախակեռասազգիներ – Caprifoliaceae</b>			
61	Գերիմաստի Viburnum lantana L.	Թ <sub>տ</sub>	Գետահովտային անտառներում
62	Կտտկենի սև - Sambucus nigra L.	Թ <sub>տ</sub>	Խոնավ վայրերում
63	Ցախակեռաս վրացական Lonicera iberica M. Bieb.	Թ <sub>տ</sub>	Չոր, քարքարոտ լեռնալանջերին
64	Ցախակեռաս կովկասյան - Lonicera caucasica Pall.	Թ <sub>տ</sub>	Անտառներում
65	Ցախակեռաս այծի - Lonicera caprifolium L.	Թ <sub>տ</sub>	Անտառներում
<b>Ուռազգիներ – Salicaceae</b>			
66	Ուռենի բարձր - Salix excelsa S. G. Gmel	Ծ <sub>տ</sub>	Գետահովիտներում
67	Ուռենի այծի (այծուռենի) - Salix caprea L.	Ծ <sub>տ</sub>	Գետահովիտներում
<b>Փռչազգիներ – Celtidaceae</b>			
68	Փռչնի կովկասյան – Celtis caucasica Willd.	Ծ <sub>տ</sub>	Անտառեզրերին, քարքարոտ լանջերին
<b>Փշատազգիներ - Elaeagnaceae</b>			
69	Փշատենի նեղատերև - Elaeagnus angustifolia L.	Ծ <sub>տ</sub>	Քարքարոտ լանջերին

Ծանոթություն. Ծ/թ/մ-ճառանման թուփ մշտադալար, Ծ/թ/տ – ճառանման թուփ տերևաթափ, Ծ<sub>տ</sub> – ճառ տերևաթափ, Թ<sub>տ</sub> – թուփ տերևաթափ, Թ<sub>ս</sub> – թուփ մշտադալար, Կ<sub>թ</sub>-կիսաթուփ, Լ<sub>տ</sub> - լիան տերևաթափ:

Ըստ Ա.Լ. Թախտաջյանի՝ վարդազգիների ընտանիքի բարձր դիրքը բնորոշ է ամբողջ Կովկասյան պրովինցիային, որը կապված է անտառային և հետանտառային բուսականության գերակշռության հետ [5]: Ցեղերի սպեկտրում առաջատար դիրք է գրավում մոշենին:



Խնածախի տարածաշրջանի դենդրոֆլորայի կենսաձևերը կազմում են հետևյալ հարաբերակցությունը՝ ծառեր – 34 տեսակ, թփեր – 23 տեսակ, կիսաթփեր – 7 տեսակ, լիաններ՝ 5 տեսակ /աղ.2/: Կիսաթփատեսակների քանակությունը /7 տեսակ/ քիչ է և հարմարված է հիմնականում կիրճերին, գետափերին ու ժայռոտ աճելավայրերին: Խնածախի տարածաշրջանի դենդրոֆլորայում ասեղնատերևավորներից հանդիպում են միայն գիհի (*Juniperus*) ցեղի ներկայացուցիչները:

Աղյուսակ 2.

Ճյուղայի կենսաձևերի սպեկտրը

Կենսաձևը	Տեսակների քանակը	%
ծառեր	34	49.3
թփեր	23	33.4
կիսաթփեր	7	10.1
լիան	5	7.2
ընդամենը	69	100

Ամփոփելով ուսումնասիրությունների արդյունքները՝ պարզվեց, որ ընդհանուր առմամբ Խնածախի տարածաշրջանի դենդրոֆլորան հարուստ է և ներկայացված է 69 տեսակներով, որոնք պատկանում են 43 ցեղի և 26 ընտանիքի/աղ.1/: Գերակշռողը վարդազգիների (*Rosaceae*) ընտանիքն է՝ 11 ցեղ և 22 տեսակ: Ցախակեռասազգիները (*Caprifoliaceae*) ներկայացված են 3 ցեղով և 5 տեսակով, ձիթենազգիները (*Oleaceae*) ներկայացված են 3 ցեղով և 4 տեսակով, բակլազգիները (*Fabaceae*)՝ 2 ցեղով և 2 տեսակով, տիլազգիները (*Corylaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, դժնիկազգիները (*Rhamnaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, հոնազգիները (*Cornaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, թեղազգիները (*Ulmaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, ուռազգիները (*Salicaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, հաճարազգիները (*Fagaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, թխկազգիները (*Aceraceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, իլենազգիները (*Celastraceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, նոճազգիները (*Cupressaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, ընկուզազգիները (*Juglandaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով: Մնացած ընտանիքները ներկայացված են 1 ցեղով և 1 տեսակով:

### Գրականություն

1. Հակոբյան Ա.Ն., Մոշենու և մոռենու ենթացեղերի տեսակային կազմը և տարածվածությունը Արցախում. ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 2010, 2 (22), էջ 36-40.
2. Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ., Հայաստանի դենդրոֆլորա, Երևան, 1985 – 1986, 1-2:
3. Մելքունյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, էջ 132
4. Карягин И.И. Флора Азербайджана, 1–7, Баку, 1950–1957
5. Тахтаджян А.Л. Флора Армении. 1-7, Ереван, 1954 – 1980

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Ա.Գ.Գալստյանը: